

ԹԻԻՐՔԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ *)

III

Րեֆորմների անկարելիութիւնը տնտեսական կեանքի տեսակէտից:

Ներկայ գլխում մենք մտադրութիւն չունենք նկարագրելու ոչ բերդերի խստութիւնները, ոչ ալրանանիների յարաբերութիւնը թիւրքահպատակ քրիստոնեաների հետ և ոչ էլ թիւրք կառավարութեան քաղաքականութիւնը դէպի իր հպատակ ազգութիւնները: Քաղաքական այն անթիւ հալածանքներն ու տանջանքները, որոնց ենթարկուած են թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւնները ներկայումս ծանօթ է մինչև իսկ Եւրոպային: Աւելի ևս. 90-ական թուականների ղէպքերից յետոյ, ոչ ոք եւրոպայում էլ չի համարձակուում, ինչպէս սրանից շուրջ 10—12 տարի առաջ, պնդեց թէ մակեդոնացիների կամ հայերի մասնաւոր կամ ընդհանուր կոտորածները հնարովի պատմութիւններ են. փաստը, ասում ենք ապացուցուած է, որ կոտորածները հետևանք են թիւրքիայի ընդհանուր քաղաքական ու տնտեսական բեօթիմի:

Մենք ուզում ենք կանգ առնել միայն իրերի տրամաբանութեան վրայ, որոնք պարունակում են երկրի տնտեսական-ֆինանսական ձևերի մէջ և որոնք բացատրում են հետևեալ պատմական իրողութիւնը թէ՛ ոչ մի մասնաւոր քարննորոգութիւն, ոչ մի մասնաւոր ընփորմ չի կարող իրագործուիլ թրքաց միապետութեան սահմաններում: Իհարկէ եթէ եւրոպական դիպլոմատիան ընդունէր այն ակսիոման, որ արևելեան հարցում, ինչպէս և բոլոր հասարակական-պատմական կնճոռտ հարցերում՝ յայտնի հասարակական երևոյթները—անխուսափելի ծնունդ են որոշ քաղաքական-սոցիալական պատճառների, այն ժամանակ, ասում ենք, մասնաւոր ընփորմների անկարելիութիւնը ինքն ըստ ինքեան կը պարզուէր: Եթէ եւրոպական դիպլո-

*) Տես «Մուրճ», № 5.

մատիան նեղութիւն կրէր ծանօթանալ (կամ եթէ ծանօթ է յայտնէր) ամբողջ թիւրք պետութեան արդի սոցիալական-տնտեսական դրութեան հետ՝ այն ժամանակ գուցէ նրա առաջարկած բեֆորմներ ինքնուրուիւնը և նրանց չիք դերը ակներև կը լինէր թէ իրան տիպլոմատիային և թէ բազմաթիւ եւրոպացիներին: Եւրոպացիների համար պարզ կը լինէր, որ քանի թըրքահայաստանում ու Մակեդոնիայում գոյութիւն կունենան տիրող սոցիալական—տնտեսական յարաբերութիւնները, ոչ մի մասնաւոր բեֆորմ, լինի դատաստանական, ոստիկանական, թէ ժանդարմական չի կարող մազի չափ անգամ քրիստոնեաների դրութիւնը բարուղել: Ընդհակառակը՝ շատ անգամ մասնաւոր բեֆորմները այն էլ դըսից թելադրած, այսինքն եւրոպական տէրութիւններից առաջարկուած բեֆորմները—ճարտարգորէն կարող են զարթեցնել ու զրգուել թիւրք կառավարութեան ու տիրող տարրերի ֆանատիկոսութիւնը, կրքերը և նրանց «չար կամքը» դէպի հպատակ այլազգիները: Որպէս պերճախօս ապացոյց մեր ասածին կարող ենք մատնացոյց անել Թիւրքիայի պատմութեան վրայ 19-րդ դարում: Այդ պատմութիւնից մենք պարզօրէն տեսնում ենք, որ մինչև իսկ երբ ինքը Թիւրքիան պատրաստականութիւն է յայտնել և ուղեցել կառավարական որևէ ճիւղում բեֆորմներ մտցնել իր պետութեան մէջ՝ անկարող է եղել. ուստի և այս կամ այն բեֆորմի ընդունուելը կամ խոստումը սուլթանների կողմից՝ միևնոյն է ոչ մի դրական եղրակացութեան չի յանգի:

Այդ բազմաթիւ մասնաւոր բեֆորմների և աւելի ևս բազմաթիւ խոստումների մասին մենք դեռ կը խօսենք ներքև. այժմ անցնենք այն նիւթական պատճառներին, որոնք թէ Մակեդոնիայում և թէ Թըրքա-Հայաստանում ծնեցնում են անորմալ հասարակական հետևանքներ, ինչպէս օրինակի համար կողոպուտ, կեղեքում, ապստամբութիւն, գաղթականութիւն, իսկ Եւրոպայի աչքում Արևելեան հարց և պատերազմական պատրաստութիւններ:

Կարծել, որ Թըրքահպատակ ազգութիւնների դժգոհութիւնը անպատճառ Թիւրքիայից զատուելու տանջանքից է բխում — խոշոր սխալ է. աշխարհագրական քարտէզների փոփոխութիւնները չեն, որ զբաղեցնում էին և զբաղեցնում են հային կամ մակեդոնացուն, այլ հարստահարութիւնները, կեանքի ու կայքի անապահովութիւնը, անվերջ անանկութիւնները ու տնտեսական քայքայումը, մի խօսքով հասարակական տնտեսական դրութիւնը: Եւ այդ խօսքերի տակ հախ և առաջ հասկացում է մի որևէ երկրի թէ ժողովրդի և թէ կառավարու-

թեան հարստութիւնը, հողագործութեան, վաճառականութեան ու արդիւնագործութեան զարգացումը. իսկ միւս կողմից այն նիւթական-իրաւական յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի կառավարութեան ու ժողովրդի մէջ և որը հարկերի, տուրքերի և այլ ձևերն է ստանում:

Որո՞նք են կառավարութեան ու ժողովրդի այդ փոխադարձ յարաբերութիւնները:

Թրքահպատակ ազգութիւններից, մանաւանդ մակեդոնացիներից և հայերից վերցրած հարկերը թէ՛ քանակութեան և թէ՛ հարկահաւաքութեան կողմից անտանելի են: Բեռնաւորուած ահագին հարկերով՝ նրանք կեանքի ամեն քայլում սայթաքում, ջախջախւում են այն բեռի տակ:

1855—մինչև 1895 թ. աւելի շատ մնանկութիւններ են եղած Թիւրքիայում, քան թէ 50 տարուայ մէջ:

Մի կողմից տուրքերը կրկնապատկւում են, միւս կողմից յոգնած երկիրը էլ զլանում է առատ բերք տալ: Բայց հարկերը ոչ թէ միայն գումարի տեսակէտից ժողովրդի նիւթական ոյժից բարձր են, այլ և այդ հարկերի ձևը, այն փողային և ոչ թէ ապրանքային սխտեմն է, որ եռապատկւում է նրանց ծանրութիւնը և կեանքը անկարելի դարձնում:

Բանը նրանումն է, որ 1878—79 թուականներից յետոյ, Թիւրքիայի ֆինանսների տնօրինութիւնը փաստօրէն անցաւ եւրոպական պետութիւնների ձեռքը՝ նշանակուեց Թիւրքիայի պարտքերի վճարման (ամորտիզացիա) ամենախիստ պահանջ ուստի Թիւրք կառավարութիւնը սկսեց իր պարտքերը կամաց-կամաց ժողովել ոչ թէ ապրանքով, այլ փողով: Եւ դա մի այնպիսի երկրի ժողովրդից, որտեղ գոյութիւն չունի կանոնաւոր վաճառականութիւն և ոչ էլ խոշոր արդիւնագործութիւն: Այս հանգամանքը, որի վրայ շատ քիչ ուշադրութիւն են դարձնում եւրոպացիները ահագին փոփոխութիւն մտցրեց Թրքահպատակ ժողովրդի հասարակական-քաղաքական կեանքում:

Կառավարութիւնը ստիպւում է հարկերը վճարել փողով՝ արծաթով կամ այլ մետաղով առանց մի ըոպէ ուշադրութիւն դարձնելու, թէ հրտեղից, օրինակ, Մուշի կամ այլ գաւառի գիւղերը կարող են փող մատակարարել: Գուցէ կարելի է ծախել հաց կամ այլ ապրանք: Իսկ կամ արդեօք այն պայմանները, որոնք կարելի են դարձնում որևէ, գէթ նախնական վաճառականութիւն. ծախել աշխատանքը... Իսկ հւր են այն իրաւական պայմանները, որոնցով վարձու աշխատանքը կարելի լինէր կանոնաւորապէս ի գործ ածել: Արդիւնաբերել գործաւաններով... Բայց չէ՞ որ գործարանական արդիւնաբերու-

թեան կենսունակութեան համար պէտք է էլի փոփոխ ծախել, իսկ ժողովուրդը ոչինչ չունի, որ գնի. չկան նոյնպէս ճանապարհներ, որպէսզի արդիւնաբերուածը—արտահանուի:

Զկայ տնտեսական նախաձեռնութիւն, այլ կայ կառավարութիւնից պաշտպանուած վաշխառութեան սխտեսութեան, շնորհիւ հարկահանութեան փողային. սխտեմի—նոր և ընդարձակ պահանջներ—բայց ամեն ինչ կաշկանդման է ենթարկւում, որովհետև չկան յարմար հաղորդակցութիւններ, թէ գաւառներում և թէ գաւառներից դուրս:

Զկայ մինչև իսկ թէ մասնաւոր և թէ հասարակական սեփականութեան ապահովութիւն: Աւելորդ է ասելն էլ, որ թիւրքիայի արդի տիրող քաղաքական-ֆինանսական պայմաններում ոչինչ չի կարող զարգանալ և լայն ծաւալ ստանալ:

Մի կողմից մեծանում է հողագործի գիւղացիների քանակութիւնը, միւս կողմից խոշոր արդիւնաբերութեան բացակայութեան պատճառով նոյն հողագործի գիւղացիները գաղթում են երկրից դուրս: Միշտ աչքի առաջ ունենալու է այն հանգամանքը, որ թիւրքիայում համարեա ամենայն ազատութեամբ ներմուծւում են եւրոպական գործարանական ապրանքները: Եւ Լէյպցիկի կամ Վիեննայի այս ինչ ապրանքը մտնելով մի որևէ Մոնաստիր կամ Մարզում, տեղն ի տեղը ոչնչացնում են տեղային արհեստաւոր դասակարգի արդիւնաբերած ապրանքները: Շնորհիւ շատ պայմանների այդ ապրանքները անհամեմատ աւելի լաւ լինելով հայերի, մակեդոնացիների, թուրքերի տնային և գործարանական արդիւնաբերութիւնից—վերջինս անկարող է մրցել Լէյպցիկի կամ Վիեննայի մեքենայական սխտեմի դէմ և քայքայւում է: Եւ որովհետև թրքաց գաւառներում չկայ խոշոր արդիւնաբերութեան համար իրաւական մթնոլորտ, ուստի քայքայուած արհեստաւորը հետևելով քայքայուած գիւղացուն՝ ձեռք է առնում գաղթականութեան ցուպը և օտար վայրեր է ճանապարհ ընկնում:

Այդ նոր վայրերում է, որ նա զարգացնելու է արդիւնագործութիւնը, որպէս պրոլետարիատ: Իսկ ի՞նչ մօտ—իր մօտ, իր երկիրը անապատ է դառնում, որովհետև ոչինչ չէ պաշտպանուած. ոչ աշխատանքը, ոչ կեանքը և ոչ էլ մինչև իսկ կապիտալը: Եթէ գոյութիւն ունենային այն տարրական իրաւական պայմանները, որոնց մթնոլորտում մասնաւոր սեփականութիւնը ապահոված է—գուցէ հէնց աւատրիացի, գերմանացի կամ ֆրանսիացի կապիտալիստները շտապէին գալ թիւրքիա և այնտեղ հաստատուելով՝ բանային խոշոր գործարաններ ու շահագործէին էժան, առատ ու անգործ գիւղացու ձեռքերը:

Բայց այդ միջոցները բացակայում է և գերմանացիներ գերազանցում է արտադրել իր պետութեան սահմաններում և միայն յետոյ մատակարարել ասիական երկրներին:

Ad valorem—մաքուր օտար ապրանքների վրայ ինքն ըստ ինքեան մի բացառիկ գործոն է մի որևէ երկրում խոշոր արդիւնաբերութեան զարգացման համար: Քանի որ սեփականութեան անձեռնմխելիութիւնը ու հովանաւորող տարիքները գոյութիւն չունին Թիւրքիայում, նա չի կարող մրցել այն երկրների հետ որոնք կապիտալիստական ուղիի վրայ են կանգնած: Եւ հէնց նոյն խոշոր պետութիւններն և կամ նրանց կառավարող կապիտալիստական դասակարգն է, որ անասելի եռանդով հակառակում է Թիւրքիայում մտցնուելիք հովանաւորող տարիքների դէմ, որովհետեւ եւրոպական գործարանական ապրանքները այդ տարիքների ու մեծացած մաքսի պատճառով շատ ավելի քիչ կարող են ներմուծել Թիւրքիա, քան թէ մինչև այսօր:

Բացի այդ կան և այլ պատճառներ. ինչպէս զարգանայ խոշոր գործարանական արդիւնագործութիւնը, երբ երկրում նախ և առաջ պակասում է ածուխը, եթէ չհաշուենք նաւթը ու ջրվէժները, որ գործ չեն ածուծում): Ճիշտ է ածուխը գոյութիւն ունի Փոքր Ասիայում, բայց միայն, «էրէզլէ»-ի հանքն է որ շահագործում է, այն էլ սահմանափակ քանակութեամբ: Թըրքաց Հայաստանում, էրզրումի մօտերը գտնուած են մի քանի ածխի հանքեր, բայց ինքը Թիւրք կառավարութիւնը ամեն միջոց գործ է ածում կոնցեսսիա չտալու համար ¹⁾: Արգելուած է ձեռք տալ նոյնպէս Թըքատի ու Վանի շրջականներում գտնուած ածխի շերտերին:

Քանիցս եղել են դէպքեր, երբ եւրոպացի կապիտալիստներ եկել են Փոքր Ասիայում գործարաններ բանալու նպատակով, բայց հանդիպել են անվերջ ձևակերպութիւնների, բազմատեսակ «բարձրիշների», այնպէս որ գործը դեռ չսկսած՝ կապիտալի կէսը «անհրաժեշտ ծախսերի» մէջ մտնել ու գործը հէնց իր սաղմում սպանել են:

Միայն մի դէպքում Թիւրքիան առատ սերմեր է տալիս կապիտալիզմի զարգացման համար, դա ինչպէս ասացինք հողագուրկ ժողովրդի պրոլետարիազացիան է (սեփականագուրկ դառնալը): Բայց պրոլետարիատը մենակ, առանց միւս նիւթական ու իրաւական պայմանների դեռ չի կարող զարգացնել կապիտալիստական արդիւնագործութիւնը: Աղքատացած և որևէ

¹⁾ *See* Bul. de la chambre de commerce franc. à Constantinople, janvier 1892.

նիւթական սեփականութիւնից զուրկ հողագործների մի մասը մնում է գիւղում, տանելով իր չարքաշ կեանքը։ դրանց դրութիւնը շատ անելի վատ է քան թէ արդիւնաբերական բաղադրանքների բանտրոնների դրութիւնը։ Այդ սեփականագուրկ գիւղացիին գտնուում է խոշոր քիւրդ կամ ալքանացի հողագործների, «աղա»ների մօտ ստրկութեան մէջ, խօսքիս կատարեալ նշանակութեամբ։ Իսկ սեփականագուրկ գիւղացիների միւս մասը, հայերը թողնելով իրանց տունը, տեղը, ընտանիքը—գաղթում են դէպի օտար երկիրներ՝ գլխաւորապէս խոշոր արդիւնաբերական կենտրոններ՝ Բաթում, Բադու, Օդեսսա, Նովորոսիյսկ, Բուրգաս, Լին-Մաս, Նիւ-Նօրկ, Չիկագօ, Նոյնպէս Կ. Պոլիս և Զմիւռնիա։ Եւ այդ կենտրոններում մտնելով տեղական արդիւնագործութեան մէջ, որպէս վարձու բանուոր, հայ գաղթականը մեծացնում, լայնացնում է այդ վայրերում գտնուած օտար պրոլետարիատի շարքերը։ Ամերիկայում կարելի է հաշուել մօտ 40 հազար, Նոյնքան էլ, գուցէ և անելի Ռուսաստանի ծովափնեայ քաղաքներում։ Բայց այդ երկրներում արդէն նրանք ոչ թէ հայ պրոլետարներ են, այլ ամերիկացի, ռուս, և այլն պրոլետարիատ։

Թող թէ այդ հայ բանուորը պահպանած լինի իր կրօնը և լեզուն, բայց քանի որ նա իր սեփական հայրենիքում և ծննդավայրում չի խաղում պրոլետարիային յատուկ հասարակական-քաղաքական դերը, քանի որ նա չի մասնակցում իր հայրենի երկրի հարստութեան կուտակման գործում—ուստի և նա չի կարող որեւէ սոցիալական դեր խաղալ, որպէս հայ պրոլետարիատ, իր երկրից դուրս։ Պրոլետարիատին յատուկ, բնորոշ հասարակական դերը նա խաղում է այն երկրների վերաբերմամբ, որը և շահագործում է նրա մկանային կամ մտաւոր ոյժերը, ոյժեր, որ նոյն երկրի հարստութեան կուտակման գործին են ծառայում։

Ոչ մի տեղ իրերի դրութիւնը այնքան հակասութեան մէջ չէ ձգել իրաւական և տնտեսական փոխադարձ յարաբերութիւնները, որքան Թիւրքիայում։ Այդտեղ ներկայ քաղաքական պայմաններում և ունեւորի և չունեւորի շահերը պահանջում են թրքաց միապետական կարգերի ոչնչացումը, որոնք իրանց կառավարական, հարկային և ֆինանսական սխտեմներով ու ձեւերով վերոյիշեալ երկու դասակարգերի զարգացման ու շահերի համար էլ արգելք են, աւերիչ են, ֆասակար և իրանց էութեամբ անհամապատասխան Թիւրքիայում ծագող տնտեսական նոր յարաբերութիւններին։

Սրանք այլեւ պահանջում են, հասարակական—քաղաքա-

կան նոր, բոլորովին տարբեր դասակարգեր՝ համաձայն այդ նոր յարաբերութիւնների էութեան, ներքին տրամաբանութեան: Կարող են այդ բոլորը անել, հատուկտոր, պոչատ, մասնաւոր բեֆորմներ: Իհարկէ ոչ:

Հէնց այդ նոր յարաբերութիւններն են, որ պատմական բեմի վրայ են հանել ըի հայկական, մի մակեդոնական դատ, որը այդ ազգութիւնների տնտեսական և հետևապէս քաղաքական-հասարակական ընդհանուր առաջադիմութեան ու զարգացման դատն է: Հէնց ինքը տնտեսական կեանքը պահաջում է, որ Թիւրքիայում կերպարանափոխուեն քաղաքական, իրաւական ու սոցիալական յարաբերութիւնները:

Այլ խօսքով կեանքի ներքին, նիւթական իմաստը ուռել է մինչև այն աստիճան, որ էլ արտաքին ձևը անբաւարար է դառնում և կեղևը պատառում է: Այդ պրոցեսը մարդիկ ապստամբութիւն են անուանում: Պատմութեան տեսակէտից այդ պայմաններում է հայ կամ մակեդոնական հարցի մեկընման կէտը: Պէտք է որոնել հէնց այդ տեղ և ոչ այլ տեղ հայկական և մակեդոնական խլրտումների, ապստամբութիւնների շարժառիթը: Հէնց այդ նիւթական պայմաններով է բացատրւում և այն պատմական իրողութիւնը, որ հայերը կամ մակեդոնացիները 'հարիւրաւոր տարիներ իբրև «ամենախաղաղ» և «հատարիմ ազգ» հռչակուելուց յետոյ, միայն վերջի 20—25 տարիները նրանք սկսեցին սիստեմատիկաբար ապստամբուել: Սուլթանը թուում է որոնել բոլոր աղէտների պատճառը մի Սոֆիայում, մի Ժընևում կամ Պարիզում ու Լոնդոնում—մինչդեռ իր քայքայուած երկրի տնտեսական ու ֆինանսական սիստեմը անսպառ աղբիւր է ներկայացնում ամեն տեսակ դժգոհութիւնների, որոնք քաղաքական ապստամբութեան ձևի տակ են երևան գալիս ժամանակ առ ժամանակ:

Ինչ պարզ կը լինէր ժողովրդների պատմութիւնը և ինչ հեշտ կը լինէր մարդկային պատմութեան բացատրութիւնը՝ եթէ ժողովրդների դժգոհութիւնը բացատրելու և հասկանալու համար մենք որոնէինք մի քանի անհատների, մի քանի Սարաֆոյների, Մուրատների և այլոց չար կամ բարի կամքի մէջ...

Կայ աւելին. նոյն իսկ թրքահպատակ ազգերի ճակատագիրը երբէք կախուած չէ որևէ բարի կամ չար սուլթանի բըմահաճոյքից: Որոշ և մասնաւոր դէպքերում, սուլթանի չար կամքը քանիցս յայտնուել է, և նա արդէն պատմութեան մէջ Կլադստոնի բերնից իր անունը ստացել է,—խօսք չունենք բայց հազիւ թէ նա իր բարի կամքով վաղը կարողանար բարուքել իր հպատակների դրութիւնը, գործադրելով այս կամ

այն մասնաւոր բեֆորմները: Այդ բեֆորմներէ ամբողջ ապիկարութիւնը տեսնելու համար անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսք ասել թրքահայտակ հայ և մակեդոնացի ժողովրդի տնտեսական-սոցիալական պայմանների մասին:

Յայտնի է, որ մի երկրի ժողովրդի, այն էլ հողագործ ժողովրդի համար կեանքի ամենածանր ու ամենաէական դր-ժուարութիւնները կայանում են հարկերի ծանրութեան և այդ հարկերի վճարման ձևի մէջ: Հարկերի քանակութիւնը ու տե-սակները Թիւրքիայում բաւականին առատ են. մի քանիսը նը-րանցից գոյութիւն ունեն մի քանի դարերի ընթացքում, միւս-ները ներմուծուած են 19-րդ դարու վերջի բառորդում: Հար-կերից ամենանշանաւորն է իր ծանրութեամբ ու պատմական հետեանքներով «տասանորդ» կոչուածը, որ կայանում է հետեւելում. կառավարութիւնը նախօրօք աճուրդով է ծախում ցանքսի մօտաւորապէս ստացուելիք արդիւնքը ամեն մի վի-լայէթի համար առանձին առանձին: Այդպիսով ամեն վիլայէ-թի տասանորդը աճուրդից գնած մի որեւէ անհատի կող-մից—նորից ծախւում է երկրորդ կարգի սպեկուլեանտներին. իսկ սրանք բաժանում են վիլայէթը սանջակներին և ստացուե-լիք տասանորդը ծախում են մաս-մաս զանազան անհատների: Եւ որովհետեւ ամեն մի գնողը ստիպուած է նախ և առաջ իր ծախսած փողը յետ առնել ապա և բացի դրանից մի որեւէ գումար վաստակել՝ կարելի է երեւակայել, թէ ի՞նչ մեծ՝ զանա-զանութիւն է լինում կառավարութեան ստացած տասանորդի ու գիւղացիներից փաստօրէն վերցրած տասանորդի մէջ:

Ցանքսի տէրը, գիւղացին, համարեա միշտ պարտքերի տակ քեռնաւորուած, անհամբեր սպասում է իր բերքի ծախե-լու րոպէին: Բայց երբ նա արդէն հնձել է իր ցորենը, նա դեռ ստիպուած է կախելուց առաջ սպասել երկար օրեր, մինչև իսկ շաքաթներ, մինչև որ տասանորդի տէրը բարեհաճէ գալ և նը-րանից վերցնել պատկանելիք տասանորդը: Տասանորդի տէրը որը ընդհանրապէս հացահատիկների վաճառական է, օգտւում է այդ դրութիւնից՝ ստիպելով հայ կամ մակեդոնացի գիւղա-ցուն հանդիսատես լինել իր ցանքսի փոխուն՝ դաշտում, բաց օդի տակ: Հէնց այդ ժամանակ տասանորդատէրը այցելում է գիւղացուն և իրան պատկանելիքը վերցնելուց յետոյ հարկա-դրում է անկողմնակի կերպով իրան ծախել և ճաւելորդ մասն է՝ քա մմենաէֆան գնով: Աւելորդ է ասել, ոչ հարկահանը մենակ չի գալիս. նա իր կարգադրութեան տակ ունի կառավարական պաշտօնեաներ, զափթիաներ, իսկ գլխաւորը բերել է իր հետ գիւղի մուկտարին, որոնք ամենայն պատրաստականութեամբ

դապում են գիւղացու դժգոհութիւնը: Հարկահանը պէտք է ստանայ իր պահանջը ինչ ձևով էլ որ լինի. ուստի եթէ գիւղացու բերքը ոչինչ չի տուել նա հէնց տեղն ու տեղը բռնի ծախում է գիւղացու ամենակարեւոր տնային պիտոյքները և իհարկէ չափազանց էժան գնով. ոչխարն ու կովը, էջն ու եղը, տան կահ-կարասիքը, անգամ անկողինն ու վերմակը, մինչև որ պատկանեւիք, հարկը ստացուի. բողոքները անելորդ են: 1894 թ. հայկական գաւառների մասնաւոր շարժումների արմատը պէտք է որոնել հէնց այդ հարկահանների և պաշտօնեաների հարստահարութիւնների մէջ, որոնք վերջացան սարսափելի կոտորածով:

Ռուբէն Բերքերեան

(Կը շարունակուէ)

ՄԵՐ ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆԸ

(Պատմհաճք)

Ես պառկած, ծխում էի անդադար... Երեակայութիւնս ստեղծում էր հարիւրաւոր պատկերներ՝ մէկը միախց սքանչելի, մէկը միախց այլանդակ... Այնպիսի երազողներից եմ ես, որին՝ որպէս սապատողին՝ միայն գերեզմանը կարող է ուղղել... Ոչ կեանքի դառն փորձերը, ոչ սպիտակ թելերը, որոնք դաւաճանօրէն խառնուել են մազերիս հետ, չզրկեցին ինձ այդ յատկութիւնից:

Իմ հին բարեկամ Ռուբէնը՝ նստած սեղանի մօտ՝ խորասուզուել էր ընթերցանութեան մէջ: Այդ մարդը՝ որը թէև կեանքի կէսը անցրել էր նիւթապաշտ քաղաքում, ուր ամեն մի զգացմունք զոհ է բերւում ոսկի հորթին, այնուամենայնիւ չէր բաւականանում այն նեղ շրջանակով, որի մէջ նրան սահմանափակում էր արհեստը: Գիտութեան ծարաւը մեծ էր. նա ուսումնասիրում, վերլուծում էր ամեն մի երևոյթ, որի վրայ կանգ էր առնում իր ուշադրութիւնը: Գուցէ հէնց այդ հանգամանքի շնորհիւ չընկզմուեց այն ճահճի մէջ, որը բոլորին քաշում էր, խորասուզում: Երկար տարիներ վարակիչ մթնո-